

«Ալմաստ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,
էլեկտրոնային հասցե՝ account@almastcompany.com

Էական փաստեր և տեղեկություններ

Հայտարարություն

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվելու է 2021 թվականի ապրիլի 28-ին, ժ. 12:00, իր գտնվելու վայրում՝ ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ընդհանուր ժողովի օրակարգում հետևյալ հարցերն են.

1. «Ալմաստ» ԲԲԸ տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմի հաստատում, անդամների ընտրություն և հաստատում,

2. «Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ի գեկույց 2020 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ,

3. «Ալմաստ» ԲԲԸ 2020թ. գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացում,

4. «Ալմաստ» ԲԲԸ 2020թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում,

5. «Ալմաստ» ԲԲԸ 2020թ. գործունեության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների վճարման (չվճարման) մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում,

6. «Ալմաստ» ԲԲԸ վերստուգողի ընտրություն:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2021 թվականի ապրիլի 6-ի դրությամբ:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ալմաստ» ԲԲԸ բաժնետիրոջ կողմից տրված լիազորագրով:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին կտրամադրվեն տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական եզրակացությունը, վերստուգողի եզրակացությունը, տեղեկություններ Խորհրդի անդամների և վերստուգողի վերաբերյալ և այլ անհրաժեշտ նյութերը: Օրակարգում ընդգրկված հարցի հետ կապված փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեով:

«Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝

«Արինս Գրուպ» ՍՊԸ

Լիազորված անձ՝

Արմեն Գևորգյան